ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Մովսես 1.39

Սա Աստծո գործն է և փառքը:

**Ենթատեքստ**

Բարձր լեռան վրա Աստված խոսեց Մովսեսի հետ երես-առ-երես և բացատրեց մարդկության համար Իր հավերժական նպատակը:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Երկնային Հոր ծրագիրը մեզ ճանապարհ է տալիս հավերժ ապրելու և Նրա նման դառնալու համար:

**Կիրառում**

Ինչպե՞ս կարող եք դուք աջակցել Աստծուն Իր աշխատանքում: Ինչպե՞ս կարող եք դուք օգնել ուրիշներին փնտրել հավերժական կյանք:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Մովսես 7.18

Սիոն՝ մեկ սիրտ և մեկ միտք արդարակեցության մեջ

**Ենթատեքստ**

Ենովքը ուսուցանում է ավետարանը և հիմնում արդարակեցության քաղաք մեծ ամբարշտության ժամանակ:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Տիրոջ ժողովուրդը միավորվում է, ապրում արդար և հոգ տանում միմյանց համար:

**Կիրառում**

Ի՞նչ կարող եք դուք անել՝ միասնություն կառուցելու, արդարակեցություն տարածելու և օգնելու համար ձեր ընտանիքի, ծխի կամ ճյուղի կարիքի մեջ գտնվող անդամներին:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Աբրահամ 3.22–23

Աբրահամն ընտրվել էր դեռ ծնվելուց առաջ:

**Ենթատեքստ**

Աստված ուսուցանեց Աբրահամին նախաերկրային հոգիների մասին:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Մենք ապրել ենք Աստծո հետ ծնվելուց առաջ և Նա ընտրել է իր ազնվազարմ և լավ զավակներին դառնալու կառավարիչներ և ղեկավարներ այստեղ՝ Երկրի վրա:

**Կիրառում**

Ինչպե՞ս է ճշմարտությունն այն մասին, որ Աստված գիտեր ձեզ ձեր ծնվելուց առաջ, ոգեշնչում ձեզ հետևել Նրան մահկանացու կյանքում:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Ծննդոց 1.26-27

Աստված ստեղծել է մարդուն Իր պատկերով:

**Ենթատեքստ**

Արարման պատմությունը սկսվում է Ադամին և Եվային Երկրի վրա տեղավորելուց:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Տղամարդիկ և կանայք ստեղծվել են Աստծո պատկերով և նրանց տրվել է իշխող դեր Երկրի բոլոր կենդանիների և արարածների վրա:

**Կիրառում**

Դուք Աստծո զավակն եք՝ Նրա պատկերով ստեղծված: Երբ դուք աղոթում եք Երկնային Հորը, հիշեք, որ Նա սիրող Հայր է:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Ծննդոց 2.24

Ամուսինները պետք է մեկ լինեն:

**Ենթատեքստ**

Եվայի արարումից հետո, Աստված ուսուցանեց Ադամին և Եվային, որ միություն պետք է լինի նրանց ամուսնության մեջ:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը կարգված է Աստծո կողմից:

**Կիրառում**

Ի՞նչ դուք կանեք այժմ, որպեսզի պատրաստվեք ամուսնությանն ապագայում: Ի՞նչ չափանիշների դուք կհետևեք՝ ձեր ապագա ամուսնու հետ ձեր միությունը հարգելու համար:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Ծննդոց 39.9

Հովսեփը դիմակայեց գայթակղությանը:

**Ենթատեքստ**

Պետափրեսի կինը անընդհատ փորձում էր  ստիպել Հովսեփին կենակցել իր հետ:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Սեռական անբարոյականությունը մեղք է Աստծո դեմ:

**Կիրառում**

Գտեք որոշակի չափանիշներ Երիտասարդներին զորացնելու համար գրքույկում, որոնք կարող են օգնել ձեզ մնալ բարոյապես մաքուր:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Ելից 19.5-6

Դուք սուրբ ազգ կլինեք:

**Ենթատեքստ**

Սինայ լեռան վրա Տերը հրավիրեց Իսրայելի զավակներին դառնալ Իր ուխտյալ ժողովուրդը:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Եթե մենք հնազանդվենք Տիրոջ ձայնին և պահենք Նրա ուխտերը, մենք կդառնանք Նրա սուրբ ժողովուրդը:

**Կիրառում**

Ի՞նչ դուք կանեք, որպեսզի ավելի լավ պահեք Տիրոջ հետ կապված ձեր ուխտերը:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Ելից 20.3-17

Տաս պատվիրանները

**Ենթատեքստ**

Սինայ լեռան մոտ Տերը Իսրայելի զավակներին պատվիրաններ տվեց Իր ծառա Մովսեսի միջոցով:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Եթե մենք պահենք Տաս Պատվիրանները, մենք ներդաշնակության մեջ կապրենք Աստծո և մարդկանց հետ:

**Կիրառում**

Մտածեք Տաս Պատվիրանների և այն մասին, թե որքան լավ եք դուք պահում դրանք: Պարտավորվեք ավելի լիարժեքորեն հետևել դրանց:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Հեսու 24.15

Ընտրեք ծառայել Տիրոջը:

**Ենթատեքստ**

Յեսուն ուսուցանեց Իսրայելի զավակներին, թե ինչ է արել Տերն իրենց պահպանելու համար: Նա նրանց խրախուսեց ծառայել Տիրոջը:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Մենք կարող ենք ընտրել ծառայել կամ չծառայել Տիրոջը և հետևել կամ չհետևել Նրան:

**Կիրառում**

Ի՞նչ գործողություններ են ձեր կյանքում ցուցադրում Տիրոջը ծառայելու ձեր ընտրությունը:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Ա Թագավորաց 16.7

Տերը սրտին է նայում:

**Ենթատեքստ**

Սամույելը ենթադրում էր, որ ամուր ֆիզիկական կառուցվածքի շնորհիվ Յեսսէի ավագ որդուն՝ Եղիաբին էր Տերն ընտրել  լինելու Իսրայելի նոր թագավորը:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Աստված դատում է մեզ մեր մտքերով և ցանկություններով, ոչ թե՝ արտաքին տեսքով:

**Կիրառում**

Արտաքին տեսքի վրա կենտրոնանալու փոխարեն աղոթեք, որպեսզի տեսնեք ձեզ և մյուսներին այնպես, ինչպես Աստված է տեսնում ձեզ:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Սաղմոս 24.3-4

Մաքուր ձեռքեր, անարատ սիրտ

**Ենթատեքստ**

Սաղմոսում (երգ), որով սաղմոսողը գովք է երգում Աստծուն, նա հարցնում է, թե ով արժանի կլինի կանգնելու սուրբ տեղերում, ինչպիսին է՝ տաճարը:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Եթե մենք ապաշխարենք և ապրենք մաքուր կյանքով, մենք արժանի կլինենք ստանալու տաճարի արարողությունները և մտնելու սելեստիալ արքայություն:

**Կիրառում**

Ի՞նչ կարող եք դուք անել, որպեսզի մաքուր լինեք լրատվամիջոցների և տեխնոլոգիաների հետ ձեր շփումներում: Եթե կարող եք, ծրագիր կազմեք կանոնավոր տաճար հաճախելու համար:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Սաղմոս 119.105

Աստծո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար:

**Ենթատեքստ**

Սաղմոսում (երգ) Աստծո օրենքի մասին սաղմոսողը համեմատում է Աստծո խոսքը լույսի հետ, որն առաջնորդում է մեզ կյանքի ուղով:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Աստծո խոսքը ուղղություն է տալիս մեր կյանքում:

**Կիրառում**

Փնտրեք ձեր հարցերի պատասխանները և ձեր կյանքի համար ուղղություն, երբ ուսումնասիրում եք սուրբ գրությունները և ապրող մարգարեների խոսքերը:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Սաղմոս 127.3

Երեխաները Տիրոջ ժառանգությունն են:

**Ենթատեքստ**

Աստծո օրհնությունների մասին սաղմոսը (երգը) ուսուցանում է, որ երեխաները թանկարժեք նվեր են Աստծո կողմից:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Երեխաներին պետք է փայփայել որպես Աստծո կողմից ստացված պարգևների:

**Կիրառում**

Ինչպե՞ս եք դուք այժմ պատրաստվում ձեր սեփական երեխաներին մեծացնելու և խնամելու սուրբ պարտականությանը:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Առակաց 3.5–6:

Ապավինեք Տիրոջը:

**Ենթատեքստ**

Առակաց գիրքը պարունակում է ավետարանի սկզբունքներ, բանաստեղծություններ և առակներ, որոնք խրախուսում են արդարակյաց ապրելաձև:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Եթե մենք ամբողջությամբ ապավինենք Աստծուն, Նա կառաջնորդի մեր կյանքը:

**Կիրառում**

Ինչպե՞ս կարող ենք մենք ավելի շատ ապավինել Աստծուն և ավելի քիչ՝ մեր սեփական հասկացողությանը: Եթե սովորեք մեծացնել ձեր վստահությունը Տիրոջ հանդեպ, ինչպե՞ս ձեր կյանքն ավելի շատ կլցվի աստվածային ուղղությամբ և նպատակով:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Եսայիա 1.18

Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինեն

**Ենթատեքստ**

Եսայիա մարգարեի միջոցով Տերը խրախուսում է Իր զավակներին ապաշխարել և դառնալ մաքուր:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Երբ մենք ապաշխարում ենք Հիսուս Քրիստոսի արյունը մաքրում է մեզ մեր մեղքերից և մենք կարող ենք լիովին ներվել:

**Կիրառում**

Եթե դուք չլուծված մեղք ունեք, գործադրեք ձեր հավատքը և անցեք ապաշխարության ընթացքով:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Եսայիա 5.20

Վա՜յ նրանց, որ չարին ասում են բարի:

**Ենթատեքստ**

Եսայիան նախազգուշացնում է Իսրայելի զավակներին այն վշտերի և տառապանքների մասին, որոնք իրենց բաժին կհասնեն իրենց անարդարակեցության հետևանքով:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Դժբախտությունը գալիս է, երբ մարդիկ չարիքը ներկայացնում են որպես բարի և չարը կոչում բարի:

**Կիրառում**

Ե՞րբ եք տեսել, որ լրատվամիջոցները ներկայացրել են չարը որպես բարի, իսկ բարին՝ որպես չարիք: Ինչպե՞ս կարող եք խուսափել աշխարհի կեղծ փիլիսոփայություններով խաբվելուց:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Եսայիա 29.13-14

Զարմանալի աշխատանք և հրաշք

**Ենթատեքստ**

Եսայիան մարգարեանում է, որ Տերը կվերականգնի ավետարանը վերջին օրերում՝ ուրացության ժամանակաշրջանից հետո:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Ավետարանի Վերականգնումը հրաշալի աշխատանք է, որն ուղղում է կեղծ վարդապետությունները և դիմակայում աշխարհի իմաստությանը:

**Կիրառում**

Ինչպե՞ս է վերականգնված ավետարանն օգնել ձեզ ավելի մոտենալ Տիրոջը:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Եսայիա 53.3-5

Հիսուս Քրիստոսը կրել է մեր վշտերը և տառապել է մեր մեղքերի համար:

**Ենթատեքստ**

Եսայիան մարգարեանում է Հիսուս Քրիստոսի կյանքի և քավող առաքելության մասին՝ Նրա ծննդից 700 տարի առաջ:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Հիսուս Քրիստոսը տառապել է մեր մեղքերի և վշտերի համար, մենք կարող ենք ներվել և ապաքինվել Քավության միջոցով:

**Կիրառում**

Ե՞րբ եք զգացել Քավության բժշկող զորությունը: Գրեք ձեր օրագրում կամ կիսվեք որևէ մեկի հետ Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության մասին ձեր զգացմունքներով:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Եսայիա 58.6-7

Ծոմապահության օրենքը

**Ենթատեքստ**

Երբ Եսայիա մարգարեն բացահայտեց այն ուղիները, որոնցով մարդիկ խախտում էին ծոմապահության օրենքը, նա ուսուցանեց նրանց ծոմապահության իրական նպատակները և օրհնությունները:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Ծոմն օգնում է թեթևացնել մեր և մյուսների բեռները և օգնում է մեզ հոգ տանել աղքատների մասին:

**Կիրառում**

Ե՞րբ եք ստացել ծոմապահության օրհնությունները: Երբ ծոմ եք պահում, հատուկ նպատակ ունեցեք:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Եսայիա 58.13-14

Կիրակին Տիրոջ սուրբ օրն է:

**Ենթատեքստ**

Եսայիա մարգարեն սովորեցրեց մարդկանց պահել Կիրակին սուրբ և ուսուցանեց դրանից եկող օրհնությունները:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Եթե մենք հարգենք Աստծուն, փնտրելով Նրա կամքը Կիրակի օրը, ապա կբարգավաճենք:

**Կիրառում**

Գնահատեք Կիրակի օրը պահելու ձեր սովորույթները և պարզեք, թե արդյոք այդ օրվա միջոցառումները հարգանք են ցույց տալիս առ Աստված: Զգտեք ավելի լավ ծառայել և հարգել Աստծուն Նրա սուրբ օրը:

24 հետեւ՝ սա մարդէն առնուեցաւ։ Ասոր
համար մարդը կ՚թողէ իր հայրը եւ իր
մայրը, եւ կ՚յարի իր կնոջը. եւ մէկ

26 Եվ Աստված ասաց. Մեր պատկերովը և մեր նմանության պես մարդ շինենք, որ իշխեն ծովի ձկների և երկնքի թռչունների, և անասունների և բոլոր երկրի վրա, և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա:
27 Եվ Աստված ստեղծեց մարդը իր պատկերովը. Աստծո պատկերովը ստեղծեց նրան. արու և էգ ստեղծեց նրանց:

22 Արդ, Տերը ցույց էր տվել ինձ՝ Աբրահամիս, այն բանականությունները, որոնք կազմավորվել էին նախքան աշխարհի լինելը. և այդ բոլորի մեջ կային շատ ազնիվներն ու մեծերը.
23 Եվ Աստված տեսավ այդ հոգիները, որ նրանք լավն էին, և նա կանգնեց նրանց մեջ և ասաց. Սրանց ես կդարձնեմ իմ կառավարիչները. քանզի նա կանգնել էր նրանց մեջ, որոնք ոգիներ էին, և նա տեսավ, որ նրանք լավն էին. և նա ասաց ինձ. Աբրահամ, դու սրանցից մեկն ես. դու ընտրվել էիր նախքան քո ծնվելը:

18 Եվ Տերն իր ժողովուրդը կոչեց Սիոն, քանզի նրանք մեկ սրտի և մեկ մտքի էին և բնակվում էին արդարակեցության մեջ և նրանց մեջ աղքատ չկար:

39 Քանզի ահա, այս է իմ գործը ու իմ փառքը իրականություն դարձնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը:

7 Բայց Տերը Սամուելին ասեց. Նրա երևույթին և հասակի երկայնությանը մի նայիր, որովհետև նրան անարգեցի. այն պատճառով որ այն չէ բանը որ տեսնում է մարդը. որովհետև մարդը տեսնում է աչքի առաջինը, բայց Տերը սրտին է նայում:

15 Բայց եթե Տիրոջը ծառայություն անելը ձեզ անհաճո է, ընտրեցեք այսօր ձեզ համար, թե ո՞րն եք պաշտելու. գետի այն կողմին ձեր հայրերի պաշտած աստվածները, թե Ամորհացիների աստվածները, որոնց երկրի մեջ դուք բնակվում եք. բայց ես և իմ տունը Եհովային ենք պաշտելու:

3 Բացի ինձանից ուրիշ Աստվածներ չունենաս:
4 Քեզ համար կուռք չշինես, և ոչ վերը երկնքումը՝ կամ ցածը երկրի վրա՝ կամ երկրի տակի ջրերումը եղած բաների մեկ նմանությունը:
7 Քո Եհովա Աստծո անունը դարտակ տեղը չհիշես, որովհետև Եհովան՝ իր անունը դարտակ տեղը հիշողին անպատիժ չի թողնի:
8 Հիշիր հանգստության օրը նրան սուրբ պահելու համար:
12 Պատվիր քո հորը և քո մորը, որ քո օրերը երկարանան այն երկրի վրա՝ որ քո Եհովա Աստվածը կտա քեզ:
13 Սպանություն մի անիր:
14 Շնություն մի անիր:
15 Գողություն մի անիր:
16 Քո դրացու դեմ սուտ վկայություն մի անիր:
17 Մի ցանկանար:

5 մօտ բերի։ Եւ հիմա եթէ իրաւ իմ
ձայնին լսէք եւ իմ ուխտը պահէք,
այն ժամանակ դուք ինծի համար սեպ-
հական ժողովուրդ կ՚ըլլաք ամեն ազ-
գերէն, որովհետեւ ինծի է բոլոր երկի-
6 րը։ Եւ դուք ինծի համար քահանա-
ներու թագաւորութիւն եւ սուրբ ազգ
կ՚ըլլաք։ Ասոնք են այն խօսքերը որ
Իսրայէլի որդիներուն պէտք է ըսես։

9 Այս տան մեջ ինձանից մեծը չկա, և ինձանից մի բան չարգելեց բացի քեզանից, ըստ որում դու նրա կինն ես, ուրեմն ես ինչպե՞ս գործեմ այս մեծ չարությունը, և Աստծո դեմ մեղանչեմ:

18 Հիմա եկեք ու վիճաբանենք, ասում է Տերը, եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինեն, ձյունի պես պիտի սպիտականան. եթե նրանք որդան կարմիրի պես լինեն ասրի պես սպիտակ պիտի դառնան:

5 Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը, և քո հասկացողությանը մի վստահիր:
6 Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նրան, և նա կուղղե քո ճանապարհները:

3 Ահա որդիքը Տիրոջ ժառանգութիւնն են. եւ որովայնի պտուղը՝ Նորա վարձքը։

105 Քո խօսքը ճրագ է իմ ոտների համար, եւ լոյս իմ ճանապարհի համար։

3 Ո՞վ վեր կգնա Տիրոջ սարը, և ո՞վ կկանգնի նրա սրբության տեղումը;
4 Նա, որ սուրբ է ձեռքով և անարատ սրտով. ով իր անձը անիրավության չի տալիս, և երդում չի անում նենգությունով:

13 րոգող։ Եթէ հետ դարձնես շաբաթից
քո ոտքը, որ բաղձանքդ չ՚կատարես
իմ սուրբ օրը, եւ շաբաթը կոչես
զուարճութիւն, եւ Տիրոջը նուիրուա-
ծը՝ պատուական, եւ նորան պատուես՝
քո ճանապարհները չ՚կատարելով, եւ
քո բաղձանքը չ՚լրացնելով եւ դատար-
14 կաբանութիւն չ՚անելով, Այն ժամա-
նակ կ՚զուարճանաս Տէրովը, եւ ես
քեզ վեր կ՚հանեմ երկրի բարձր տե-
ղերը, եւ քեզ կ՚ուտեցնեմ քո հայր
Յակոբի ժառանգութիւնը. որովհե-
տեւ Տիրոջ բերանը խօսեց։

6 եւ Տիրոջը հաճելի օ՞ր։ Ահա սա է
ծոմը, որին ես հաւանում եմ. լու-
ծիր անիրաւութեան կապանքները,
երաց արա լուծի կոչկոռները. եւ
ճնշուածներին ազատ թող տուր,
7 եւ ամեն տեսակ լուծ կոտրեցէք։ Այո,
քո հացդ կտրիր քաղցածին, եւ թա-
փառական խեղճերին տար տունդ,
երբոր մի մերկ տեսնես, նորան հագ-
ցրու, եւ քեզ պէս մարմին ունեցո-

3 Նա անարգված և մարդկանց երեսից ընկած, հարվածների տեր և ցավի տեղյակ եղավ, և մի այնպիսի, որից պետք է երես ծածկել. անարգված էր, և մենք նրան ոչինչ էինք համարում:
4 Հիրավի նա մեր ցավերը վեր առավ, և մեր վշտերը բեռնեց իր վրա, բայց մենք նրան պատուհարված էինք համարում, Աստվածանից զարկված և նկուն եղած:
5 Բայց նա մեր մեղքերի համար վիրավորվեցավ, և մեր անօրինությունների համար հարվածվեցավ, մեր խաղաղության պատիժը նրա վրա եղավ, և նրա վերքերովը մենք բժշկվեցանք:

13 Որովհետև այս ժողովուրդը իր բերանովն է մոտենում և իր շրթունքներովն են ինձ պատվում, իսկ նրանց սիրտը հեռու է ինձանից, և նրանց ինձ պատվելը մարդկանց սովորեցրած պատվեր է.
14 Դորա համար ահա ես այսուհետև զարմանալի բաներ եմ անելու այս ժողովրդի հետ՝ զարմանալիք և զարմանք. և պիտի փչանա նրանց իմաստունների իմաստությունը, և հանճարեղների հանճարը պիտի խափանվի:

20 Վա՜յ նորանց, որ չարին ասում են
բարի, եւ բարիին՝ չար. որ խաւարը
շինում են լոյս, եւ լոյսը՝ խաւար. որ
դառնը քաղցր են շինում, եւ քաղցրը՝

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Երեմիա 1.4-5

Երեմիան նախակարգվել էր ծնվելուց առաջ:

**Ենթատեքստ**

Կանչելով Երեմիային մարգարեանալ Հրեաստանի ժողովրդին, Տերը հայտնեց, որ Երեմիան կարգվել էր որպես մարգարե դեռ ծնվելուց առաջ:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Աստված ճանաչում էր մեզ մեր ծնվելուց առաջ և նախակարգել էր մեզ մեր երկրային առաքելություններին:

**Կիրառում**

Ուսումնասիրեք ձեր հայրապետական օրհնությունը, որպեսզի հասկանաք երկրի վրա ձեր նպատակները: Եթե դեռ չեք ստացել հայրապետական օրհնություն, պատրաստվեք դա ստանալուն:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Եզեկիել 37.15-17

Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը կապված են միմյանց:

**Ենթատեքստ**

Եզեկիելը մարգարեանում է, որ վերջին օրերում որպես Իսրայելի հավաքման մաս, Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը կմիավորվեն:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը երկուսն էլ վկայում են Հիսուս Քրիստոսի մասին մեր օրերում:

**Կիրառում**

Ուսումնասիրելով սուրբ գրությունները, գտեք ճշմարտությունները, որոնք առկա են և Աստվածաշնչում, և Մորմոնի Գրքում:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Ամովս 3.7

Աստված հայտնում է Իր գաղտնիքները Իր մարգարեներին:

**Ենթատեքստ**

Տիրոջ դատաստանների մասին նախազգուշացնելով Ամովսը վկայում է այն մասին, որ Աստված հայտնում է իր գիտելիքը Իր մարգարեներին:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Տերը բացահայտում է Իր կամքը Իր մարգարեների միջոցով:

**Կիրառում**

Ինչպե՞ս եք իմացել, որ Աստված խոսում է այսօր մարգարեների միջոցով: Ի՞նչ են ներկայիս մարգարեները խորհուրդ տալիս ձեզ անել:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Մաղաքիա 3.8–10

Տասանորդ վճարելը օրհնություններ է բերում:

**Ենթատեքստ**

Մարգարե Մաղաքիայի միջոցով Տերը ուսուցանեց ուղուց շեղված Իսրայելին վերադառնալ Իր մոտ՝ ապրելով տասանորդի օրենքով:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Եթե մենք վճարենք տասանորդը և այլ նվիրատվությունները, ապա Աստված կբացի երկնքի պատուհանները և օրհնություններ կթափի մեզ վրա:

**Կիրառում**

Ի՞նչ օրհնություններ եք դուք ստացել տասանորդի օրենքին հնազանդվելու արդյունքում:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

## Մաղաքիա 4.5–6

Եղիան կշրջի հայրերի և զավակների սրտերը:

**Ենթատեքստ**

Մաղաքիան մարգարեացավ, որ Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստից առաջ Եղիա մարգարեն կվերականգնի մահացածների համար արարողություններ կատարելու իշխանությունը:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Քանի որ Եղիան եկավ և վերականգնեց քահանայության բանալիները, մենք կարող ենք կատարել արարողություններ մեր մահացած հարազատների համար:

**Կիրառում**

Սովորեք օգտագործել ընտանեկան պատմության գործիքները, որոնք տրամադրում է Եկեղեցին: Պատրաստեք ձեր նախնիներից առնվազն մեկի անունը տաճարային արարողության համար:

## Հին Կտակարանի ընթերցման աղյուսակ

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Մովսես** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | **Աբր.** | | 1 | 2 | 3 | 4 |
| 5 | **Ծն.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 |
| 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 |
| 46 | 47 | 48 | 49 | 50 | **Ել.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | |
| **Ղևտ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | **Թվ.** | | 1 |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 |
| 34 | 35 | 36 | **Եր. Օր.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | **Յես.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| 24 | **Հուգ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | **Հռութ** | | 1 | 2 | 3 | 4 | | |
| **Ա Թագ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |
| 31 | **Բ Թագ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | **Գ Թագ.** | | 1 | 2 | 3 |
| 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 20 | 21 | 22 | **Դ Թագ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | **Ա Մնաց.** | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | **Բ Մնաց.** | | 1 |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 |
| 34 | 35 | 36 | **Եզրաս** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |
| **Նէեմ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | |
| **Եսթ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | **Յոբ** | | 1 | 2 |
| 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 |
| 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | **Սաղմ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 |
| 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 | 52 | 53 | 54 |
| 55 | 56 | 57 | 58 | 59 | 60 | 61 | 62 | 63 | 64 | 65 | 66 | 67 | 68 | 69 | 70 |
| 71 | 72 | 73 | 74 | 75 | 76 | 77 | 78 | 79 | 80 | 81 | 82 | 83 | 84 | 85 | 86 |
| 87 | 88 | 89 | 90 | 91 | 92 | 93 | 94 | 95 | 96 | 97 | 98 | 99 | 100 | 101 | 102 |
| 103 | 104 | 105 | 106 | 107 | 108 | 109 | 110 | 111 | 112 | 113 | 114 | 115 | 116 | 117 | 118 |
| 119 | 120 | 121 | 122 | 123 | 124 | 125 | 126 | 127 | 128 | 129 | 130 | 131 | 132 | 133 | 134 |
| 135 | 136 | 137 | 138 | 159 | 140 | 161 | 142 | 143 | 144 | 145 | 146 | 147 | 169 | 149 | 150 |
| **Առակաց** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |
| 31 | **Ժող.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | |
| **Երգոց** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | **Եսայ.** | | 1 | 2 | 3 | 4 |
| 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 |
| 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 | 52 |
| 53 | 54 | 55 | 56 | 57 | 58 | 59 | 60 | 61 | 62 | 63 | 64 | 65 | 66 | **Երեմ.** | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 |
| 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 |
| 49 | 50 | 51 | 52 | **Ողբ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | **Եզեկ.** | | 1 | 2 | 3 |
| 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 |
| 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | **Դան.** | | 1 |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | **Ովս.** | | 1 | 2 | 3 |
| 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | **Յով.** | | 1 | 2 | 3 |
| **Ամովս** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | **Աբդիա** | | 1 | **Հովնան** | |
| 1 | 2 | 3 | 4 | **Միքիա** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | **Նաում** | | 1 |
| 2 | 3 | **Ամբ.** | | 1 | 2 | 3 | **Սոփ.** | | 1 | 2 | 3 | **Անգէ** | | 1 | 2 |
| **Զաք.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| **Մաղ.** | | 1 | 2 | 3 | 4 | | | | | | | | | | |


## Հին Կտակարանի ընթերցման աղյուսակ

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Մովսես** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | **Աբր.** | | 1 | 2 | 3 | 4 |
| 5 | **Ծն.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 |
| 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 |
| 46 | 47 | 48 | 49 | 50 | **Ել.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | |
| **Ղևտ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | **Թվ.** | | 1 |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 |
| 34 | 35 | 36 | **Եր. Օր.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | **Յես.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| 24 | **Հուգ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | **Հռութ** | | 1 | 2 | 3 | 4 | | |
| **Ա Թագ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |
| 31 | **Բ Թագ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | **Գ Թագ.** | | 1 | 2 | 3 |
| 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 20 | 21 | 22 | **Դ Թագ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | **Ա Մնաց.** | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | **Բ Մնաց.** | | 1 |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 |
| 34 | 35 | 36 | **Եզրաս** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |
| **Նէեմ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | |
| **Եսթ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | **Յոբ** | | 1 | 2 |
| 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 |
| 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | **Սաղմ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 |
| 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 | 52 | 53 | 54 |
| 55 | 56 | 57 | 58 | 59 | 60 | 61 | 62 | 63 | 64 | 65 | 66 | 67 | 68 | 69 | 70 |
| 71 | 72 | 73 | 74 | 75 | 76 | 77 | 78 | 79 | 80 | 81 | 82 | 83 | 84 | 85 | 86 |
| 87 | 88 | 89 | 90 | 91 | 92 | 93 | 94 | 95 | 96 | 97 | 98 | 99 | 100 | 101 | 102 |
| 103 | 104 | 105 | 106 | 107 | 108 | 109 | 110 | 111 | 112 | 113 | 114 | 115 | 116 | 117 | 118 |
| 119 | 120 | 121 | 122 | 123 | 124 | 125 | 126 | 127 | 128 | 129 | 130 | 131 | 132 | 133 | 134 |
| 135 | 136 | 137 | 138 | 159 | 140 | 161 | 142 | 143 | 144 | 145 | 146 | 147 | 169 | 149 | 150 |
| **Առակաց** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |
| 31 | **Ժող.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | |
| **Երգոց** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | **Եսայ.** | | 1 | 2 | 3 | 4 |
| 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 |
| 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 | 52 |
| 53 | 54 | 55 | 56 | 57 | 58 | 59 | 60 | 61 | 62 | 63 | 64 | 65 | 66 | **Երեմ.** | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 |
| 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 |
| 49 | 50 | 51 | 52 | **Ողբ.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | **Եզեկ.** | | 1 | 2 | 3 |
| 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 |
| 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | **Դան.** | | 1 |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | **Ովս.** | | 1 | 2 | 3 |
| 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | **Յով.** | | 1 | 2 | 3 |
| **Ամովս** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | **Աբդիա** | | 1 | **Հովնան** | |
| 1 | 2 | 3 | 4 | **Միքիա** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | **Նաում** | | 1 |
| 2 | 3 | **Ամբ.** | | 1 | 2 | 3 | **Սոփ.** | | 1 | 2 | 3 | **Անգէ** | | 1 | 2 |
| **Զաք.** | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| **Մաղ.** | | 1 | 2 | 3 | 4 | | | | | | | | | | |

5 Ահա ես կուղարկեմ ձեզ համար
Եղիա մարգարեն, Տիրոջ մեծ և ահեղ օրը
գալուց առաջ.
6 Եվ նա պիտի դարձնէ հայրերի սիր-
տը դեպի որդիքը և որդկանց սիրտը՝ դեպի
իրենց հայրերը. որ մի գուցե ես գամ և եր-
կիրը զարկեմ անեծքով:

8 Մի՞թե մարդ Աստված կխաբե, որ
դուք ինձ խաբում եք. բայց դուք ասում եք.
Ի՞նչ բանում ենք քեզ խաբում. տասա-
նորդումը և ընծայումը:
9 Անեծքով դուք անիծված եք, որովհե-
տև դուք ինձ խաբում եք բոլոր ազգդ:
10 Բոլոր տասանորդը տարեք գանձա-
տունը, որ իմ տանը պաշար լինի, և ինձ
մեկ փորձեք սրանով, ասում է Զորաց Տե-
րը, թե արդյոք չե՞մ բանա ձեզ համար
երկնքի պատուհանները և օրհնություն թա-
փի ձեզ համար՝ մինչև որ նրա համար
տեղ չլինի:

7 Որովհետև Տեր Եհովան ոչ մի բան չի
անի, եթե չհայտնի իր խորհուրդը իր
ծառաներին՝ մարգարեներին:

15 Եվ Տիրոջ խոսքը եղավ ինձ ասելով.
16 Եվ դու, մարդի որդի, քեզ համար
մեկ փայտ առ և նրա վրա գրիր՝ Հուդա-
յինը և նրա ընկեր Իսրայելի որդկանցը. և
մեկ փայտ էլ առ և նրա վրա գրիր՝
Հովսեփինը՝ Եփրեմի փայտը և նրա ըն-
կեր Իսրայելի բոլոր տանը:
17 Եվ նրանց մոտեցրու միմյանց որ
մեկ փայտ դառնան, և նրանք միանան քո
ձեռքումը:

4 Եւ Տիրոջ խօսքն եղաւ ինձ ասելով.
5 Դեռ քեզ որովայնում չստեղծած՝ ես քեզ
գիտէի, եւ արգանդից դեռ դու դուրս
չեկած՝ ես քեզ սրբեցի, ես քեզ ազ-

# ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
## ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

### Սուրբ գրությունների ամենօրյա ընթերցանության աղյուսակ

| Հունվ | Փետ | Մար | Ապր | Մայ | Հունիս | Հուլիս | Օգոս | Սեպ | Հոկ | Նոյ | Դեկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 |
| 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 |
| 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 |
| 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 |
| 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 |
| 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 |
| 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 |
| 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 |
| 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 |
| 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 |
| 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 |
| 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 |
| 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 |
| 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 |
| 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 |
| 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 |
| 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 |
| 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 |
| 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 |
| 29 | (29) | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 |
| 30 |  | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 |
| 31 |  | 31 |  | 31 |  | 31 | 31 |  | 31 |  | 31 |


### Սուրբ գրությունների ամենօրյա ընթերցանության աղյուսակ

| Հունվ | Փետ | Մար | Ապր | Մայ | Հունիս | Հուլիս | Օգոս | Սեպ | Հոկ | Նոյ | Դեկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 |
| 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 |
| 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 |
| 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 |
| 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 |
| 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 |
| 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 |
| 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 |
| 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 |
| 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 |
| 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 |
| 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 |
| 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 |
| 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 |
| 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 |
| 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 |
| 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 |
| 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 |
| 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 |
| 29 | (29) | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 |
| 30 |  | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 |
| 31 |  | 31 |  | 31 |  | 31 | 31 |  | 31 |  | 31 |



ARMENIAN
4 02323 12201 6
32312 201



*Old Testament Scripture Mastery Cards.* Language.-ի թարգմանությունը


©2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում:


Անգլերենի հաստատումը. 8/11: Թարգմանության հաստատումը. 8/11: 10555 201: